

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՆՏԱՌԱՄԵՋ  
ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՅՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԳՅՈՒՆՔՆԵՐԻ  
ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

<< 26 >> հունիսի 2014թ.

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 77.1-77.6 հոդվածների պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 2014 թվականի մարտի 7-ի N 28 Ա որոշումը՝

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՎ վարչության պետ՝ Ի.Ասատրյանի, ՀԳՄՎ բաժնի վարիչ Հ. Օհանյանի, մարզպետարանի աշխատակազմի հողաշինարարության և հողօգտագործման բաժնի վարիչի տեղակալ Մ. Ղուրջուդյանի, ֆինանսատնտեսագիտական բաժնի վարիչ Գոռ Ղազարյանի կողմից իրականացվեց վարչական հսկողություն ՏԻՄ-ի պարտադիր լիազորությունների և հողօգտագործման բնագավառներում ՀՀ Գեղարքունիքի մարզի Անտառամեջ համայնքում:

1. Վարչական հսկողության արդյունքների ամփոփման արդյունքում կազմվեց սույն արձանագրությունը կից հավելվածով ներկայացված՝ հայտնաբերված խախտումների վերացման նպատակով առաջարկվող ժամկետների վերաբերյալ:

2. Առաջարկությունները նշված ժամկետում չկատարելու դեպքում այն կբողոքարկվի դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

3. Նշումներ /համայնքի ղեկավարի առարկությունները վարչական հսկողության արդյունքների և վարչական հսկողությունը իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ/

4. Արձանագրությունը կազմված է երկու օրինակից, որից մեկ օրինակը հանձնվում է ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանին, իսկ մյուս օրինակը ներկայացվում է Անտառամեջ համայնքի ղեկավարին:

ԻՎԱՆ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀՐԱՆԴԻԿ ՕՇԱՆՅԱՆ

ԳՈՒ ՂԱԶԱՐՅԱՆ

ՄԱՐԱՏ ՂՈՒՐՇՈՒԴՅԱՆ

Համայնքի ղեկավար՝

Մարտիրոսյան Կառլեն

